ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ № Վ-38/30

«ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ք. Երևան «19» սեպտեմբեր 2022թ.

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Վ. Բեսալյանի կողմից 27.06.2022 թվականին հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի կողմից Երևան քաղաքի Աշտարակի խճուղի հ. 51/34 հողամաս հասցեում՝ բնակելի տան կառուցման համար նախատեսված շինարարական հրապարակը պատշաճ կազմակերպված չէ, մասնավորապես՝ բացակայում է սահմանազատող ցանկապատը, որի վերաբերյալ 27.06.2022 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 042103 արձանագրությունը (հետայսու՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանին Երևանի քաղաքապետարանում կայանալիք նիստի վերաբերյալ ծանուցելու համար, սակայն ծանուցագիրը մինչ օրս չի վերադարձվել, իսկ կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանը չի ներկայացել՝ ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (հետայսու՝ Օրենք) 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ 27.06.2022 թվականին կազմված հ. 042103 արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթը 18.08.2022 թվականի հ. Վ-33/243 որոշմամբ կասեցվել է:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կրկին միջոցներ են ձեռնարկվել կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանին Երևանի քաղաքապետարանում 19.09.2022 թվականին կայանալիք գործի քննությանը ծանուցելու համար:

Կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի ծանուցված լինելով 19.09.2022 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին՝ չներկայացան, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցները.

Գործի քննության ընթացքում՝ որպես մեկ համակցություն, հետազոտվեցին արձանագրությունը, 15.03.2022 թվականի հ. ՇԹ-22-53 շինարարության թույլտվությունը, շինարարական հրապարակի կազմակերպման սխեման, Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական «azdarar.am» կայքից կատարված քաղվածքները և իրավախախտման լուսանկարները:

3.Գործի քննությունն իրականացնող իրավասու պաշտոնատար անձի ներքին համոզմունքներով ձևավորված պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում պարզվեց և հիմնավորվեց, որ 27.06.2022 թվականին կառուցապատող

ընդհանուր օգտագործման տարածքի աղտոտման: Կառուցապատող կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի կողմից ապահովված չէ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N 405-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 4-րդ և 7-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված պայմանները:

Կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում:

Հաշվի առնելով, որ կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանը չի ներկայացել գործի քննությանը, որի շրջանակներում հնարավորություն ուներ ներկայացնելու բացատրություններ և պարզաբանումներ՝ իրավախախտման հանգամանքների վերաբերյալ լինելու մասին, իսկ վարչական մարմինն իր միջոցներով հնարավորություն չի ունեցել ձեռք բերել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք քննարկվող գործի նկատմամբ առավելապես կարող էին ունենալ զանցանքը մեղմացնող վարչական մարմնի հայեցողական լիազորության իրացման համար, ինչպես նաև հետազոտելով գործում առկա բոլոր նյութերը, հետևում է, որ տվյալ դեպքում առկա չէ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

<u>4. Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.</u>

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությունը հետևապատասխան:

Օրենսգրքի 157.15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական վիճակի ապահովման պայմանները չպահպանելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Օրենքի² 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Օրենքի² 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածով, 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով, 219.1-րդ, 252-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 3-րդ մասի 2-րդ պարբերությունով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին » օրենքի 29.1-րդ հոդվածով, Երևանի քաղաքապետի 30.05.2022 թվականի թիվ 1986-Ա որոշմամբ՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանի նկատմամբ 18.08.2022 թվականի հ. Վ-33/243 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. Կառուցապատող Արսեն Վրեժի Զախարյանին Օրենսգրքի 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տուգանք 100.000 ՀՀ դրամ գումարի չափով:

3. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900055313366 հաշվեհամարին:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, իսկ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ